

58. ՀԵՔԻԱԹ ԱՀՄԱՏ ԽՈՋԻ, ՀԱՍՈՅԵ ՏՈՒՏԻ ԵՎ ԼՈՒՍՈՒՆ ՀԱՄԶԱ ՓԵՀԼԻՎԱՆԻ

Կեր ու չկեր Ահմատ խոջե մը կեր. տյունիի մալ ու թամալի տերն էր։ Օր մը ինքն ուրին ասաց. «Ես պիտի ժողվեմ զիմ կնիկ ու ճիժ, էրթամ հաճուքենի»։ Էլավ առավ զուր կնիկ, տղեն ու հարս, գնաց հաճուքենի։ Ջաղչիկ լե թասլիմ էրեց ուր տան խոջին։ Օր հ՚ըմնօր կիգեր կէրթեր, դաս կիտար ուր աղչկան։

Խոջա Ահմատ գնաց չգնաց, խոջեն հ՚ըմնօր լուսուն կիգեր, դաս կիտեր աղչկան ու կթողեր կէրթեր։ Ազապ տըղե մը, օր մը, զէդ աղչիկ կտեսնա, սիրտ կընկնի հ՚ինք, խոջին կասե.— Իմ սիրտ հ՚ընկեր է խոջա Ահմատի աղչիկ, կրնա՞ս զմըր մապեն շինիս, էդ աղչիկ առնե զիս, ինչ օր քու լեզուն շուռ հ՚իգա, կիտամ։

Խոջեն կասե.—Շատ աղեկ, իմ գլխուն ու արևուն, հ՚որի քզիկ չառնե, քինե ա՞ղեկ մեկ կառնե։

Լուսուն, երբ կէրթա դաս կիտա աղչկան, կըսե.—Աղչի, լաո, քու հեր գնաց հաճուքենի, հ՚անգցավ չէկավ, կարելի է մեռավ, մնաց էնդին, էկո զքզիկ կարգիմ, իտամ ֆըլան տղին։

Աղչիկ կվերու կասե.—Խոջա՛, դու տեսար օր իմ հեր հ՚եր հ՚ելավ կէրթեր հաճուքենի, կեոյա դու մըր տան խոջեն՝ իմ պապու տեղ։ Վերև աստված, ներքև քըզիկ թասլիմ էրեց զիս, օր հոր պես իգաս, էրթաս, իմ վրեն իշքիս, պակսուքեն մը էղնի՝ հոգաս, գաս իտաս ընծի, հար ինք դառնա, իգա։ Հըմկա էկեր իս, կասիս՝ «Զքզիկ կարգիմ»։ Պետք էր ես էտ

տեսակ բան մ՝էնեի, դու չթողեր. օր ըդմալ է, էլ իմ անդավորիկ ոտք չկոխիս։

Խոջեն էրեց ուր տնեն դուրս, գնաց ու փակեց ղուր դուռ, մտավ ներս։

Խոջեն տեսավ օր ինք աղչկա մը վրեն չկրցավ, հ՝ելավ գիր մը գրեց խոջա Ահմատին, թե. «Դու քանի որ գուցիր իս, քու աղչիկ ընծի ականջ չընե, օրական հարիր հոգի կբերե, հարիր կտանե»։

Էն տղեն լե տեսավ օր խոջեն բան մը չկրցավ գլուխ հանիլ, ջատուքար պառավ մը գտավ, ասաց.—Ես ծռիր իմ խոջա Ահմատի աղչկա վրեն, բըլե էնի չառնե ղիս, եթե հաջողցուս զիս առնե, ինչ օր ուզիս՝ կիտամ քզի։

Պառավն ասաց.—Վըր իմ գլխուն ու աչքին, էտ բան դու իսնե ուզե։ Դեղեց զձրձոմ, թըզպեղ մը առավ ձեռք. կեռյա ինք սոֆի է, հ՝ելավ գնաց աղչկա խեչ ու ասաց.—Լաո, էտա տարի մ՝է, օր քու պապ ու մամ գացիր ին հաճութենի, քու գլխու վրեն ջուր չլցվիբ է, ես քու մոր քուրակիրն իմ, էկեր իմ կտանիմ զքզիկ բաղնիք, զքու գլուխ լվամ։

Կին ու խելք պակաս։ Աղչիկ ավտըցավ, հ՝ելավ ընկավ պառավու ետևեն, գնաց բաղնիք։

Դու մ՝ասի, տղեն լե աղչկա առեջ գացեր է բաղնիք։ Ինք ու պառավ խոսքերնին մեկ ին էրի, օր աղչիկ բերե բաղնիք, թասլիմ էնե ուրին ու դառնա էրթա։

Կելնին կէրթան բաղնիք։ Առջին հեղ աղչիկ կտկլողնա։ Պառավ կըսե.—Դու տկլոզցի, մտի բաղնիք, ես լե վերջ կհանիմ զիմ հալավ, կիգամ։

Պառավն է, աղչիկ կմտու բաղնիք, զդուռ կդնե ու փախնի։ Աղչիկ ներս կմտնի, չմտնի, կտեսնե հուճուրից տկլոզ տղե մը բացեց զդուռ ու էկավ ներս։ Կիշքե՝ էն տղեն է օր կուզեր զինք առնիլ։ Էլ ինչ պիտի էներ. կտեսնա օր տղի ձեռքեն չկրնա ուր յախեն ազատել։

Կըսե.—Տղա լաո՛, էլ քու ձեռքեն ես հ՝ու՞ր պիտի էրթամ. ախըր էզածն էղավ։ Էկո զիրար լողկըցունք, ելնենք էրթանք, առնինք զիրար։ Էկո առջին անգամ ես լողկըցում զքըղիկ, սորա դու լե լողկըցու զիս։

Տղեն կասե.— Հա։

Աղչիկ կբերե դնե զտղի գլուխ կլվանա։ Էն վախտ օր գլուխն ու աչքեր կսապոնե, չէ՞ տղեն չտեսնե, կվերցու քրամիթ մը հա՞յ-հա՞յ, տղի գլխուն։ Տղի ուշք կընցնի, կընկնի գետին։ Հիշտապ-հիշտապ աղչիկ քանի մը թաս ջուր կըլնա վըր ուր գլխուն կելնի հագնի զուր հալավներ ու կթողե իգա ուր տուն, զդուռ կփակե, էլ չբանա։ Կասե. «Ուխտ էղնի, էլ

որ իգա զիմ դուռ, չպիտի բանամ, մինչև օր իմ պապ ու մամ դառնան գան»։

Մենք զաղջիկ թողինք ուր հալի մեջ, դառնանք իգանք խոջա Ահմատի վրեն։ Խոջա Ահմատն է, թե քանի օր գնաց չըմ գինա, էկավ անվերի սարու մը գլուխ, շայիր-չիման աղբրի մը վրեն զարկեց զուր չատըր։ Աղբրի մեկ դին խոջա Ահմատ զարկեց զուր չատըր, մեկ կողմ լե՝ ուր տղեն։ Հ՚իրկուն օր էղավ, տղեն հ՚եկավ գնաց ուր հոր չատըր ժըղլելու համար։ Հ՚անգան ատեն դարձավ էկավ օր քներ, տեսավ օր կնիկ չկա։ Ինչպես տրիր իս, էնպես էկո, գտի։ Իշեց չատրի կուշտ ու բոլոր, տեսավ օր ձիու ռեճ կա ու ամեն մեկ ձիու նալ լանկառու մը չափ է։ Դարձավ էկավ ուր հոր չատըր, ասաց.—Աբո, էն վախտ, օր էկեր ենք էդա տեղ կժղլենք, ձիավոր մը էկեր է, փախցուցեր զքու հարս։ Ամեն մեկ ձիու նալ լանկառու մը չափ է։ Առեր է ու գացեր։ Ես պիտի էրթամ իմ կնկա ետևեն, գու գնա զքու հաճուքեն էրե։

— Լաո,— ասաց խոջեն ուր տղին,— ո՞ր դինա ինչ ասլ ու ճրնս էր։ Թե օր հալալ կաթ ուտող էղներ, խոմ քու չատըրը շատ հեռուն չէր, հավար ֆիզա կըներ, կէլնենք կառնենք ձեռքեն, չրնք թողեր տաներ։ Հում կաթ ուտող էր, ուր սիրտ հազ էրիր, գացեր է։ Ընծիկ ականշ կենիս, զթարկ կիտաս։ Կիգաս կէրթանք հաճուքենի, դառնանք սաղ շանով հ՚իգանք։ Քըզիկ հըմալ կնիկ մը բերեմ օր իսկի չէղեր է։

Տղեն ասաց.—Վալլա, ես էտ սավտից վազ չըմ հ՚իգա, ես կէրթամ իմ կնկա ետևեն. դու լե կէրթաս հաճուքենի։ Տարին թըմի, նոր կդառնաս կիգաս, կիգաս էտա տեղ, զքու չատըր կզարկիս ու օր մը կիշես ընծիկ, էկա՝ աղեկ, չէկա, դու կընցնիս, կէրթաս, ես շուտ էկա, ես կիշկեմ քեզի։

Բարեմնաց էղան իրարուց, տղեն հեծավ զուր ձին, բըռնեց զէն ձիու ռեճ ու ընաց։ Հերն էլ բառցավ զուր բեռներ, բար տվեց դեմ հաճուքեն։ Խոջեն թըղ էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք տղի վրեն։

Տղեն ուր հոր մոտեն օր բաժնվեցավ, ընկավ ռեճի հետ ու քշեց։ Շատ գնաց, քիչ գնաց, տասն օրվա ճամբախ մեկ օր գնաց, տեսավ անվերի սարու մը տակ ծուխ մը կելներ։ Քշեց զուր ձին ու գնաց էդ քեռշկի առջև իշավ։ Ձին քաշեց մտավ ներս, տեսավ օր պառավ կնիկ մը կեր հ՚ոդի, ասաց.—Նանե, մսաֆըր կպահե՞ք։

Պառավն ասաց.— Մսաֆըրն աստծու մսաֆըրն է, հ՚որի չէ՞։ Բըլե ընծիկ յոթ տղա կա, գացիր են ավխուշի, հըմկա կիգան։ Ամեն մեկ ուր փեճին մեկ-մեկ ծառ կքաշե, կդնե ու կիգա, ինչքան հավք ու հավքորեք կա, կկախին ծառու ճղեն՝ կիգան։ Էկան օր տեսան էդա տեղ մարդ կա, հում ու լում, կուտեն։ Իմա՞լ էնիմ։

Ցըքրավ պառավ ինքն ուրեն՝ էդա սարու գլուխ էդա տղեն հ՝ու՞ր պիտի էրթա, ասաց.—Դու էկո, նստի, երբ էկան, կասիմ իմ մեծ քուրոջ տղեն է։

Քիչ մը դասման տվավ տղեն ուր ձիուն, լողմե մը հաց լե ինք կերավ ու պառկավ քնավ։

Պառավ աղեկ մը ջըլով ծածկեց ղտղեն։

Հ՝իրկուն օր էղավ, չէ՞ տղեն զուր գլխու գալած պատմեր էր պառվուն, պառվու տղեկներ ավխուշից դարձան էկան տուն, ներս մտան չմտան, ըսին.—Նանե, ի՞նչ մարդ-մարդահոտ է կիգա մըր տնեն։

— Քա լա՜ո՜, ի՞նչ մարդ-մարդահոտ է, սարեն-ձորեն դուք կիգաք, գինաք մարդ-մարդահոտ տնեն կիգա։ Հեղ մը էկեք նստեք։

Օր-հասըլ զտղեկները բերեց նստեցուց։

Լողմե մը հաց կերան, խըլըսան, պառավն ասաց տղեկներուն.— Լաո, ձըզիկ բան մը ասիմ, խոմ չըք հերսոտի։

— Նանե՜, մենք քոռցե՞ր ինք, կհերսոտինք։ Զաթի մենք ու մեկ մեր ունինք, էնդուր խաթր լե կոտրի՞նք։ Հերսոտցանք, ի՞նչ կէղնի մեր հալ։

— Լաո՜,— ասաց պառավ,— չեք ասի էդա ո՞րն է պառկուկ։

— Նանե, մենք ինչ գինանք, որն է պառկուկ։ Ներս մտանք ասինք. «Նանե մարդ-մարդահոտ», դու ասիր. «Սարեն-ձորեն դուք կիգաք, ինչ մարդ-մարդահոտ»։ Մենք էլ ձեն չհանինք։

— Լաո՜, էգի ձըր մեծ մորքրոջ՝ իմ քուրոջ տղեն է։ Էկեր է հոր հետ, օր հաճութենի էրթա։ Հասոյե Տուտին էկեր է, գիշերով առեր զկնիկն ու փախեր է։ Հըմկա կէրթա ետևեն։ Էկեր է էդա տեղ մըսաֆըր էղի, օր լուսուն էրթա։ Առջին անգամ օր չըսի, ձըզիկ վախեցա, դուք անաստված եք։

— Նանե, մենք վիր գեշ էղնինք մեր մորքուրոջ տղին լե՞ գեշ կեղնինք։ Հ՝ու՞ր է, հեղ մը ցուց տուր տեսնանք։

Պառավ զջուլ վերցուց, տղեն ելավ նստավ։ Պառվու տղեկները վրեն հասան, վերցուցին, էլ չըն դնե։—Բարով ես դու էկի, մորքրոջ տղա, հոնկուց հար հ՝ոդա վըր մըր աչքին իս էկի։ է, իմա՞լ էղավ, օր Հասոյե Տուտին զքու կնիկ տարավ. հեղ մը ժըղլի տեսնանք։

Տղեն սկսավ գլխուց մեկիկ-մեկիկ պատմել զուր գլխու գալած։ Ասաց.—Իմ հոր հետ ելեր ենք կէրթենք հաճութենի։ Էկանք բանցր սարու մը վերա, աղբրի մը մոտ։ Մեկ դին ես, մեկել դին լե իմ հեր դրինք զմըր չադրներ։ Հ՝իրկուն օր էղավ, հ՝ելա գացի իմ հոր չադրը, կժըղլենք։ Գեժտան գեժ դարձա էկա տեսա, օր կնիկ չկա։ Ինչպես տրիր իս, էն տեսակ էկո գտի։ Ձիավոր մը, ուր ձիու ամեն մեկ նալը քընց զլանկառի մը կեր. էկեր էր թալեր էր ուր ձիու թարքին ու գացե։ Լուսուն հ՝ելանք,

իմ հեր գնաց հաճութենի, ես լե բռնեցի զձիու ռեճն ու հ'ընկա ճամբախ. էկա, էկա ձեր քեռշկին ռաստ էկա։

— Բարով-խերով ես էկի, մորքրոջ տղա,—ասին աղբրրտանք։— Բըլե աղեկ չըս էրի էկի։ Էն ձիավոր Հասոյե Տուտեն է, տաս հազար կոն էլ ունի, ինք էդ էլի էլաղասին է, ջատ զորպա մարդ է։ Մենք լե էնդոր ձեռքեն ինք փախի, էկի հ'ոդա։ Զմբը պապ սպանեց. մենք պղտիկ ենք, հ'ելավ մբը մամ, առավ զմզեկ ու էկավ էդա սարու գլուխ։ Շինինք զմբը տուն ու մանցինք։ Աղեկ չըս էրի էկի, քանի օր էկեր իս, իշենք՝ ճամբե մը կհանինք մենք լե քըզի։ Էնդոր ձիու քուռակը հ'ոդա է։ Կիտանք քզիկ, կհեծնիս, կէրթաս։ Մեկ լե մբը մեկ մորքուր էնտեղն է. էնտոր տղեկները Հասոյե Տուտի բաշ-խուլամներն ին. զիր մը լե կգրենք, կտանիս էնդոր, պալքիմ ճար մ'էնի էնե. թե չէ՝ ճար չկա։

Կերան, խմեցին, պառկան քնան։ Տղեն հ'ելավ լուսմութ, կերավ զուր ակրատ, հալալաշմիշ էղավ պառվուց, ուր տղեկներուց, հեծավ զձիու քուռակն ու հ'ընկավ ճամբախ։ Պառվու տղեկներ զաթի ասած են տղեն. «Երբ կէրթաս, կմոտենաս Հասոյե Տուտի էլուն, զձիու գլուխ կթողիս, հ'ուր օր գնաց կանավ, հ'ոնի կիշնեռ»։

Տղեն հեռվանց դաշտի մը մեջ տեսավ, օր էլ մը կա զարկուք. հրսապ ու քրթապ չկա ուր կոներուն։ Ասաց ինքն իրեն՝ «Կա ու չկա Հասոյե Տուտի էլ օր կա, էդա է»։ Զձիու գլուխ թողեց, գնաց, պառվու մը դուռ կանավ։ Պառավ զձիու խրխնջուն օր լսեց, ճանչցավ օր ուր քուրոջ ձիու ձեն է։ Դուրս հ'ելավ, տեսավ, օր բաբաիկիթ տղե մը էկեր ու ուր դուռը իշեր է։ Ուտիս-չուտիս, ուր իրեսն իշքիս։ Պատուերկ մաներ. հասկըցավ օր ուր քուրոջ տղեն է։ Զին քաշեց ներս։ Ջուլ մը լե դրավ, տղեն նստավ ու սկսավ հարցուփորձ էնիլ։

— Տզա, լաո, դու ու էդա տեղրա՞նք. խեր է՞, իմալ էղավ՝ էկար, իմալ է՞ իմ քուր, ուր տղեկները։

Տղեն մեկիկ-մեկիկ զուր գլխու գալած պատմեց ու ճեպեն մորքուրոջ թուղթը հանեց, տվեց պառվու ձեռք։

Երբ պառավ կարդաց ու հասկցավ, էդ կնիկ, օր հարսնեկ բռնիր էն ու կէնին՝ ուր քուրոջ տղի կնիկն է էղի, զարկեց չոքին ու ասաց.— Հեյ վա՜խ, երանի թե չիգեր. կնիկ մ'էր՝ տարան, թըղ տանեն։ Լաո, դու հ'ո՞րի պիտի հ'ելներ, ընկներ ետևեն։ Հավքն ուր թևոք, օձն ուր պորտոք էդա կողմեր չկրնա իգա, դու ի՞նչպես էկար։ Իմա՞լ պիտի խըլրսցուս կնիկ Հասոյե Տուտի ձեռքեն ու տանիս։ Պետք չէր հ'իգեր, քանի օր էկեր իս, մենք լե կիշքինք։

Տղին դրեց կտոր մը հաց լե, կերավ, հանգստացավ։ Տղեն տեսավ օր տրհոլ ու ղուռնի ձեն կիգա, ասաց.—Նանե, էդ ի՞նչ տրհոլ ու ղուռնի ձեն է։

— Լաո, ի՞նչ տրհոլ ու ղուռնի ձեն է. քու կնկա հարսնիքն է։ Էդա քառասուն օր է, օր բռնիր ին, իրեկ օր մանցեր է, օր թմի քառասուն օրն օր պսակին, փըրցնին ազատին։ Թե օր էդա իրեկ օրվա մեջ բան մը կըրցանք էնիլ՝ աղեկ, թե չէ՝ կէրթա ու կէրթա։

Տղեն ասաց.— Նանե, դու գինաս ղարիպ մարդու սիրտ նեղ է։ Էրթամ էդ հարսնիք, քիչ մը թամաշա էնիմ ու հ՚իգամ։

— Լաո, կէրթաս, բան մը չասիմ։ Ընծիկ էրկու տղա կա, Հասոյե Տուտի բաշ մըշկընիրն ին։ Հարսնից գովընտի գլուխ մեկ էն տղեն է բռնի, մեկ լե՝ էն տղեն։ Որն օր էրթա հարսնից գովընտի գլուխ, յախուտ էնդոնց ձեռք բռնե, մեկ-մեկ ճըլոթ կղարկին, օր վիզ դառնա ետևանց։ Դու ու քու աստված, չէղնի անխելքութեն էնիս, էրթաս, բռնիս գովընտի գլուխ, հանդե քզիկ ճըլոթ մը կղարկին՝ վիզդ ի կդառնա ետևանց։

— Նանե, ընծիկ ի՞նչ գործ կա գովընտի հետ, ես ղարիպ մարդ մ՚իմ թամաշի համար կէրթամ, սիրտս բացվի քիչ մը, մեկ լե դառնամ հ՚իգամ։

Հ՚ելավ գնաց, մտավ հարսնից մեջ։ Տեսավ, օր գովընտի ծեր չէր երևեր։ Ինչքան էլի մեջ հարս ու աղջիկ ու խորթ կեր, բռներ ին գովընտ ու կխաղան։ Քիչ մը գովընտի մեջտեղ, հ՚ուր օր պառվընեն ու հալվորները նստուկ են, նստավ։ Սորա հ՚ելավ, գընաց գովընտի գլուխ բռնեց, քոլսով փըռչըլեկ ապով մեկ մը բռներ էր գովընտի գլուխ ու կխաղեր։ Դարձավ ճըլոթ մը զարկեց, ճըլոթ չէր, թուի մըն էր, աչք լե չթարթեց։ Ճըլոթ մը լե մեկել աղբեր զարկեց, թողեց, էկավ հուշիկ ուր տեղ նըստավ ու միամտցուց, զինք թալեց պառվու տուն ու զչուլ քաշեց գլուխ։

Հասոյե Տուտի մըշկներ ուրանց քըրպեն իրարուց կցըխեն. «Ինչ ըսել է, մենք էղնենք Հասոյե Տուտու մշկընները, վիրն օր ճըլոթ մը զարկենք՝ վիզ կդառնար հ՚ետևանց, կյատե մ՚եզնի, հ՚իգա բռնի գովընտի գլուխն ու մըր ձեռք, ճըլոթ զարկինք, երես լե չդարձու։ Էլ մենք հ՚որ՞ի կապրինք աշխարհքիս իրեսս»։

Թողեցին գովընտի գլուխ, հարսնիք, ֆըրզան ու էկան ուրանց տուն։ Ներս մտան. կփընչփընչան, ամեքու քթեն մեկ-մեկ գորտ կընկներ։ Պառավ հասկցավ օր բան մ՚էղեր է ուր տղեկներուն, ասաց.—Լաո, խեր էղնի, ի՞նչ է էղի, օր դուք հըմլա կփընչփընչաք։

— Նանե,—ասին էրկու աղբեր,—էլ ինչ էղնի։ Մենք էղնինք Հասոյե Տուտու մշկընեբ, վիրն օր ճըլոթ մը զարկենք, վիզ կդառներ ետևանց,

կյատե մը էկավ, բռնեց գովընտի գլուխ. ճըլոթ մ'ես զարկի, մեկ լե իմ ախպեր, աչք լե չթարթեց։ Մենք չպատռինք, էլ ո՞ր պառռի։

— Հա՜յ, ձըր ձեռք կոտրեր, իմալ ձըր ձեռք գնաց, զարկեցիք։ Չէ էն ձըր քոքեն ու բրսեն էր, օր ուր աչք կյառլամիշ չէզավ։

— Իմա՞լ նանե, մըր քոքեն ու բրսեն։

— Ըպա չասիք էն ո՞րն է, էնի ձըր մեծ մորքուրոշ տղեն է։ Էդա հարսնիք լե, էնդոր կնկա հարսնիքն է, օր կէնեք. Հասոյե Տուտին փախ-ցուցեր է, բերի. էկեր է հ'ետևեն։

— Նանե, հ'ու՞ր է մըր մորքրոշ տղեն, ցուցուր տեսնանք։

Զջուլ քաշեց, տղեն ելավ նստավ։

— Քու գլխուն ու արևուն մեռնինք, մորքրոշ տղա։ Բարով ու խերով իս էկի, մըր աչք քոռներ, չզարկինք քզիկ, չդիտցանք, խալթ մ'էրինք։ Հիվի կէնինք քինե, օր վրա չրռնիս, մենք լե քու մորքրոշ տղեկներն ինք, դու զէն մասի, ինչպե՞ս էղեր է, օր դու էկեր իս էդա դին։

Տղեն մեկիկ-մեկիկ պատմեց զուր գլխու գալած, ասաց. թե.—Ես ու իմ հեր հ'ելեր ենք, կէրթենք հաճութենի։ Էկանք, սարու մը գլուխ զարկինք զմըր չատըրներ։ Հ'իրկուն հ'ելա գացի իմ հոր խեչ, կժըղլենք։ Քնելու ատեն դարձա էկա, տեսա օր կնիկ չկա։ Իշքեցի տեսա, ձիու մը ռեճ, ամեկ մեկ նալ լանկառի մը կեր։ Հասկցա օր ձիավոր մը տարեր է։ Հ'ելա բարեմնաց էղա իմ հոր մոտեն, էն գնաց հաճութենի, ես լե բրռ-նեցի զձիու ռեճ, հ'ընկա ճամբախ։ Էկա ռաստ էկա մըր մորքրոշ տղեկ-ներու քեռշկին ու հոնկուց լե՝ հ'ոտա. էկեր իմ իմ կնկա հ'ետևեն։

Մորքուր հանեց զուր քուրոշ թուղթ ու էրկնցուց տղեկներուն. կար-դացին, հասկցան էղելություն ու շատ ուրախ էղան։ Բրլե ասացին տղին.— Շատ դժար է, թե օր մըր մամ բան մը չէնե, մենք չընք կռնա էնի։ Մեկ լե դու իմա՞լ կտանիս, Հասոյե Տուտին զքզիկ օր բռնեց, ավա կտոր անկաշդ կթողե։ Էնդոր ձին հավքերու հետ հուքմ կէնե, մըր ձեռքեն էկածն մենք լե կէնինք, մարիֆաթ կմնա քզիկ ու քու մորքուրոշ։

Տղեն ասաց.—Ես լե կտանեմ, կրցա՝ կխըլըսիմ, կէրթամ։ Չկրցա՝ թըղ զիմ գլուխ կտրե Հասոյե Տուտին։

— Օր հըմալ է,— ասին ջուխտակ աղբեր,— մըր մամ լուսուն թըղ էրթա, զհարս խաբե, հանե դուրս, օլըրցու։ Տեղ մը կընըշնինք, դու լե գնա, կանի էնտեղ, թալե թարքիդ ու գնա։

Տղեն ասաց.—Վըր իմ գլխուն ու աչքին, դուք իմ ձեռք հասուցեք զէնի, տանել իմ վրեն։

Կերան, խմեցին ու պառկան քնան։

Լուսուն օր էղավ, պառավ հ'ելավ, գնաց. ասաց Հասոյե Տուտուն,— Էդ հարս օր բերիր ես, հըմկա քըրպեն կպատռի. մինակ դրիր իք ներս,

քողք քաշիր է էրեսին..չէ՞ Լդ լե խան է, թողեք տանիմ օլրրտցում քիչ մը, սիրտ բացվի։

Հասոյե Տուտին պառվու խաթըր չկոտրեց, ասաց.—Տարեք օլրրցուցեք։

Պառավ ժողվեց հարսներն ու աղջիկներ, առավ զնոր հարսն ու հ'ելան կոներուց դուրս, մըշ բաղերուն շուռ կիգեր։ Մեկ լե տեսան էն դիեն ձիավոր մը եկավ, վերցուց զհարս, թալեց թարկին ու քշեց։ Հավար գնաց Հասոյե Տուտուն, թե՝ քու կնիկ տարան։ Ըսավ.—Տարան, թըղ տանին, դուք ձըր զուգթեն ջաշ մ'էնեկ, ձըր քեֆին իշքեք, կերեք ու խմեք։

Իրեկ օր լե զարկին ու խազցան, մինչև օր քառսունք թըմավ. Հասոյե Տուտին հեծավ զուր ձին, բարեմնաց էղավ ու քշեց։

Ֆախաթ էն վախտ, օր տղեն զաղջիկ թալեր էր ուր թամքին ու զձին քըշի, աղջիկ զուր հալավները կտրտեր էր, թափի ճամբու հետ, օր թե ռեճ էղնի, իրիկ տեսնա, հ'իգա ետևեն։ Հասոյե Տուտին բռնեց զէդ ռեճն ու քշեց։ Կնիկ վիրա կդառներ, կիշքեր ետևանց թե՝ էկավ, չէկավ։ Մեկ լե տեսավ, օր հասվե հաս է։ Հասան իրարու, տղեն զկնիկ հիշուց ձիուց ու սկսան իրարու զարկել. մինչև կեսօր զարկեցին իրարու, չկրցան զիրար ալթ էնիլ։

Տղեն ասաց.— Աղբեր, մեղք չի՞ն մեր ձիանք, իշնինք ձիուց ու իրար գանք, որն օր զարկեց ըզոր գետին, կնիկ թըղ էնդոր եղնի։

— Շատ աղեկ,— ասեց Հասոյե Տուտին։

Իշան ձիաններուց ու էկան իրար. տղեն վերցուց զՀասոյե Տուտին, քիչ մնաց օր զարկեր գետին, կնիկ հ'ուշիկ մը քաշեց զտղի օտկ, տղեն հ'ընկավ տակ ու Հասոյե Տուտին՝ վրեն, քաշեց զթուր, տվեց Հասոյե Տուտու ձեռք։

Ասաց.—Կտրե զէնդոր գլուխ։

Տղեն ասաց.—Տնավեր, ի՞նչ կհասկնաս հ'իսնե, զիմ գլուխ կկըտրես, կապե զիմ օտք ու ձեռք, թալե արևու առջև, թող գնա։

Հասոյե Տուտին տղի ասածի պես էրեց. կապեց զտղի օտք ու ձեռք, թալեց արև, ինք լե զարկեց շատըր, առավ զուր կնիկ ու պառկավ։ Կեսօրվան շոգն էր, մարդ կճինճիռտար արևու առջև։ Աստծու հրամանքով էկավ հ'ուշապ մը, կանավ տղի գլխու վրեն, փընշաց, էփեի հովավ տղի ջանտակ։ Վերջ էկավ շատըրի բոլոր փաթ մը տվեց, տեսավ, օր փարշ մը կա կախուկ շատըրի տիրակից։ Փաթվավ սուն, փառչի ջուրը առավ էրկու անգամ բերան, զբերան ցողվեց, դարտկեց փարշի մեջ ու թողեց, գնաց։ Հասոյե Տուտին քնից հ'ելավ, ճիկար կվառեր, քիչ մը ջուր հ'ուզեց, օր խմե, կնիկ իշուց զփարշ, տվեց ձեռք, դրա չէր դըրի մըռթին, ցըխաց իրարուց։ Կնիկ քաշեց զթուր, էկավ տղի բոլոր, օր զգլուխ կտրեր։

Ասաց.—Անհոգի, իմա՞լ գրրսվար էկար դեղիր զչուր, զիմ էրիկ սպանեցիր, մեկ լե էկար քու տեղ պառկար, իմա՞լ իս, կտրի՞մ զդլուխտ։

Տղեն ասաց.—Կնիկ, իմ ձեռք ու օտք կապուկ թալուկ էդա տեղ, ես իմա՞լ էկա դեղի ու դարձա էկա։ Դե՞ղ հ'ուստեն էր իմ մոտ։ Զիս սպանիս, իմա՞լ կէնիս դու անտեր ու անտիրական էդա անվերի սարերու գլուխ։ Կսպանիս լե, դու գինաս, կթողիս՝ դու գինաս։

— Օր հրմալ է,—ասաց կնիկ—հ'երտվի ընծիկ բան չասիս, հարձկիմ զքու օտք ու ձեռք, հ'ելնենք, էրթանք։ Դու՝ ընծիկ էրիկ, ես լե՝ քզիկ կնիկ։

Տղեն ուխտ էրեց, օր կնկան չոռ չասե։ Կնիկ հարձրկեց զտղի օտք ու ձեռք, հ'ելան հեծան, առան զիրար, էկան գիշեր մը մանցին մորքրոջ քյոշկ։ Տղեն պատմեց զուր գլխու գալած։ Հ'ելան լուսմթի պառվու տղեկները հեր հ'իմցան օր Հասոյե Տուտին սպանվիր է, բառցան զուրանց տուն ու տեղ, դիմավորեցան իրենց էլ ու աշիրն. տղեն լե բարեմնաց եղավ, հեծավ զուր ձին ու հ'ընկավ ճամբախ։ Էկավ էնտեղ օր ուր հոր մոտեն բաժնվեր էր։ Ջատրը զարկեց ու իշքեց հոր։

Դառնանք խոջա Ահմատի վրեն. խոջա Ահմատն է, տղից օր բաժնրվավ, հ'ընկավ սար ու ձոր, ձիավորի մը ռաստ էկավ։ Տեսավ օր սարսարի, սարսարի կօլրրտեր, ասաց.— Ախբեր, ի՞նչ սարսարի, սարսարի հ'ընկեր իս, սար ու ձոր կօլրրտիս, էկո՝ զքրզիկ իմ հետ տանիմ հաճութենի։

Էլ բան չհարցուց, նե ինք հարցուց ձիավորեն, թե՝ դու ո՞րն իս, հ'ո՞րի կօլրրտիս էդ տեղրանք, նե ձիավոր հարցուց։ Հ'ընկան հ'իրարու հետ գացին հաճութենի, զուրանց հաճութեն էրին։ Դարձան օր կիգեն, ճամբու հետ, բերին զաղչկա վրայոք՝ խոջի գրած թուղթ տվին հաճի Ահմատի ձեռք։ Բացեց ու կարդաց, ինքն ուրեն ասաց. «Էլ ընծիկ հարամ է էն տուն ու տեղ էրթալ»։ Տեսավ օր ուր տղեն լե էկիր է, իշավ ձիուց ու զուր չատրը զարկեց։ Կանչեց զտղեն, զաղչկա թուղթ տվեց կարդալ ու ասաց.—Թե օր չէրթաս, զքու քուր չսպանես, շապիկ լե թաթխիս արնի մեջ, առնիս հ'իգաս, ես էլ էն տուն չրմ մտնի։

Տղեն ասաց.—Թրղ էղնի։

Առջին հեղ բերեց զհարս կապեց ջորու պոչ ու ասաց. «Սար կզարկիք, ձոր կզարկիք, ձրը պոչ հ'անատակ ջրերու մեջ կցողվիք ու կիգաք»։ Վերջ բերեց զկնիկ, տվեց էն մարդուն, ասաց. «Դու լե զէտա կտանիս, սպանիս, օր թը իմ սիրտ հանգատի, թը չէ ուրիշ ճար չկա»։

Մարդ խելոք մարդ էր, գիցավ օր, օր մը խոջա Ահմատ պիտի փոշմընի ուր էրածի վրեն։ Տարավ զկնիկ խոջա Ահմատի քաղքի մոտ, տեղ

մը փորեց, պահեց ու հ՚ըմնօր մեկ-մեկ հաց կբերեր, թալեր էդ կնկան, օր անոթից չմեռնի։

Աղբերն է, օր հ՚ելավ գնաց ու քուր լսեց, օր աղբերն է էկի, վազեց դուս, փաթվավ աղբոր վիզ։

— Աղբեր, դու բարով իս էկի, հ՚ուր է իմ մամ ու պապ, մըր հարս, էնդոնկ հ՚ուր մանցին, օր դու էկար, էնդոնկ չէկան։

Աղբերն ասաց.— Ի՞նչ բարով ու խերով է,—ու հանեց խոջի գրած թուղթ, գրեց քուրոջ ձեռք, ասաց,—ես էկեր իմ, օր զքզիկ սպանիմ, զքու չապիկ թաթխիմ արնի մեջ, տանիմ իմ պապուն, օր հ՚ելնի, հ՚իգա ուր տուն, թը չէ, չի գա։

Քուրն ասաց աղբոր.— Աղբեր, իմ արնի տակ մը մտնի, տար զիս՝ թալ սար, ուլ մը առ, բի մորթե, զիմ չապիկ թաթխե արնի մեջ, առ գնա իմ պապուն։ Թող ուր տնեն դարպեդար չէղնի իմ հ՚ապով, դառնա հ՚իգա ուր տուն։

Տղեն անկաջ էրեց ուր քուրոջ, առավ զքուր, տարավ սարու մը գլուխ թողեց, հովվից առավ ուլ մը, մորթեց, քուրոջ չապիկ թաթխեց ուլու արնի մեջ, առավ գնաց ուր հոր, թե՝ սպաներ ի։ Նոր խոջա Ահմատ դարձավ էկավ ուր տուն։

Խոջա Ահմատի աղջիկն է, երբ հ՚ընկավ սարիր, գնաց ռաստ էկավ հովվի մը։ Տվեց զուր հալվներ հովվին, առավ զհովվի հալվներ, հագավ։ Աղբրի մը վրա փրտոտ ծառ մը կեր, գնաց հ՚ելավ փրտոտի մեջ նստավ։

Թագավորի տղեն օր մը ավուխուշի հ՚ելիր էր։ Բերեր են զձիանք աղբրի վրեն կշրեն։ Ինչ էրին՝ ջուր չխմեցին ձիանք. աղբրի վրեն օր կբերեին, կխրատեն, կդառնեն ետ։ Գացին ասին թագավորի տղին, թե. «Ձիանք ջուր չխմեցին, ինչքան տարանք աղբրի վրեն՝ խրատացին, դառցան ետ»։ Թագավորի տղեն ինք հ՚ելավ էկավ, ասաց. «Երթամ տեսնամ հ՚ո՞րի չըն խմիր»։ Էկավ իշքեց ջրի մեջ, օր աղջկա մը պատուերք կա, ուտիս, չուտիս հ՚ինք իշքիս։ Հասկցավ օր էդ պատուերքից էր կխրատեն ձիանք։ Իշքեց վի, օր աղջիկ մը փաթուկ է քրուշեր ու նստիր է ծառու փրտոտ։ Հ՚ելան բերին. առանց հարց ու փորձելու, թե դու վիր աղջիկն իս, հ՚ո՞րին իս էկի հ՚ելի հ՚ոդա, տարավ էրեց ուրեն կնիկ։ Կնիկ լե ինատ էրեց, թագավորի տղի հետ չըր խոսեր։ Տաս-տասնուհինգ տաբի էդ հըմալ հ՚ընցուց։ Ուրեն իրեք տղա լե էղավ, դրա թագավորի տղի հետ չըր խոսեր։ Հ՚ըմնօր թագավորն ու ուր կնիկ կափաբերնեն զուրանք տըղեն, թե. «Գացիր էկար լալ մը առար, ո՞ր գինա, ինչ ջան աղջիկ է, օր հ՚ընկեր է սարերդ»։ Թագավորի տղեն բան լե չասեր. ջուքըր կիտեր աստծուն ու կասեր՝ «Իմ գլխու գիր հըմլա է գրվիդ»։

Օր մը եկավ տերվիշ մը կընցներ։ Թագավորի տղեն ասաց, թե.— Տրսնուհինգ տարի է կարգվիր իմ, իմ կնիկ իմ հետ չխոսա, կրոնա՞ս թուղթ մը էնիս, օր իմ հետ խոսա։

Ասաց տերվիշ.— Քու կնիկ լալ չէ, կխոսա, ըրլե ինատ է էրի, օր քու հետ չխոսա։ Առ իրեք հավկիթ խաշե, մեկ ներկե կարմիր, մեկ՝ կանաչ, մեկ լե՝ դեղին, տուր քու ճժերու ձեռք ու դու լե պատրվտի դռան ետև։ Հանտե քու ճժեր զիրար կծեծին, քու կնիկ կխոսա, կէլնիս բռնիս։

Տերվիշի ասածի պես թագավորի տղեն առավ իրեք հավկիթ, խաշեց. մեկ ներկեց կարմիր, մեկ՝ կանաչ, մեկ լե՝ դեղին, տվեց տղեկներու ձեռք ու ինք լե պատրվտավ դռան ետև։ Տղեկներ սկսան զիրար ծեծել, էկավ մեր ուրանց ասաց. «Ձըր հոր խելք էդա է, ըպա ձեր խելք ի՞նչ պիտի էղնի»։ Հուշիկ մը թագավորի տղեն պատրվտուկ տեղեն հ՚ելավ, բրռնեց, ասաց.— Դու իմ հետ հ՚ո՞րի չըս խոսա, սապապն ի՞նչ է։

Կնիկն ասաց.—Ի՞նչ խոսամ, դու գիս սարու գըլխեն բռնիր, բերիր, էրիր քզիկ կնիկ, օր մը չհարցուցիր. «Կնիկ դու վի՞ր աղջիկն իս, իմա՞լ էկիր ես էդ սարու գլուխ»։ Էլ ի՞նչ քու հետ խոսենք։

Նոր ուր գլխու գալած պատմեց էրկան։

Հ՚ընցավ ժում ու ժամանակ մը։ Թագավորի հարս ասաց. «Կերթամ իմ հոր տուն, զիմ հեր ու աղբեր տեսնամ, դառնամ հ՚իգամ»։ Թագավորի տղեն է, տեսավ զկնկա թաղարուք, բերեց դրեց սադրազամի հետ ու ասքըրով ղրկեց ուր հոր տուն։

Մեկ-էրկու ավուր խոնախ գացին. սադրազամ աչք թալեց թագավորի հարս, հ՚իրկուն օր եղավ, բռնեց յախից, ասաց.—Դու պետք է իմ հետ իտաս ու առնիս, եթե չիտաս ու առնիս, հ՚էսօր զքու մեծ տղեն կմորթիմ։

Թագավորի հարս ասաց.—Կուզիս մորթե, կուզիս մը մորթե, ես էդ հրմալ բան չըմ էնի։

Ու գնաց ուր շատրի տակ պառկավ։

Սադրազամ տարավ զմեծ տղեն մորթեց։ Լուսուն հ՚ելան ու հ՚ընկան ճամբախ։ Մինչև հ՚իրկուն գացին. հ՚իրկուն օր էղավ, էմ լե սադրազամ բռնեց թագավորի հարսի փողպատ ու ասաց.—Թե հ՚էսօր լե իմ հետ չիտաս առնիս, զքու միշնեկ տղեն պիտի մորթիմ։

Թագավորի հարս ասաց.—Քու քեֆ գինա, ինչ կուզիս էրե, ես էդ հրմալ բան չըմ էնի։

Հ՚էնօր լե միշինեկ տղեն մորթեց. մնաց պզտիկ աղեն։ Լուսուն մեկ լե հ՚ելան ու հ՚ընկան ճամբախ։ Մինչև հ՚իրկուն գացին։ Հ՚իրկուն օր էղավ, սադրազամ բռնեց թագավորի հարսի փողպատն ու ասաց.—Թե

օր Հ'էսօր լե իմ հետ չիտաս չառնիս, ըստ հաղ զքու պզտիկ տղեն կմորթեմ։

Թագավորի հարս ասաց.—Ես քզիկ ասիր իմ անգամ մը, թե զէգ բան չըմ էնի. զտղեն կմորթիս, ինչ կէնիս էրե։

Էն օր լե զպզտիկ տղեն մորթեց։ Լուսուն Հ'ելան ու Հ'ընկան ճամբախ։ Մինչև Հ'իրկուն գացին։ Հ'իրկուն տեղ մը զարկին զուրանց շատրը, նստան։ Թագավորի հարսի շատրը հեռուն էր զարկուկ սադրազամի շատրից։ Մեկ լե սադրազամ բռնեց Թագավորի հարսի յախեն ու ասաց.— Հ'էսօր գոր քումն է, թե օր իմ հետ չիտաս առնիս, քու ըռզայով իթիխատ էրե աստծուն, օր զքզիկ կմորթիմ։

Թագավորի հարսն է, տեսավ, օր սադրազամի ձեռքեն յախա չկրնա ազատե, ասաց.— Թող եղնի, թող զիս, էրթամ դուրս մը ելնիմ, դառնամ հ'իգամ, ինչ կուզիս էրե։

Սադրազամ ասաց.— Ես չըմ ավտնա քըզիկ, կխաբիս, փախնիս։ Օր հմալ է, բի շըրիտ մը կապիմ քու օտք, գնա հ'ելի դուրս ու դառձի էկո։

— Շատ աղեկ,— ասաց Թագավորի հարս։

Սադրազամ բերեց հ'երկեն շըրիտ մը կապեց հարսի օտք, մեկ գլուխ լե առավ ուր մոտ ու թողեց։ Մութն էր։ Հարս գնաց, հ'եր հեռեցավ սադրազամի շատրից, չվան հարձրկեց ուր օտնեն, կապեց փըշրուլ մը ու ինք հ'ընկավ սարեր։ Սադրազամն է օր տեսավ կնիկ չէկավ, ասաց՝ հ'ելնիմ էրթամ, տեսնամ ի՞նչ էղավ։ Գնաց տեսավ, օր կնիկ չկա. ինչպես տրեր իս, հըմալ էկո գտի։ Հ'ելավ լուսուն, դարձավ գնաց Թագավորի տղին ասաց.—Քու կնիկ գիշեր հ'ելեր էր, փախի, հ'ուր օր օլըրտա, չգտա։

Թագավորի տղեն ասաց.— Ես կերթամ իմ կնկա ետևեն։

Ինչ էրեց Թագավորն ու Թագավորի կնիկ, թե. «Լաո, էկո մ'երթա, ո՞ր գինա, ինչ ռնտի աղչիկ էր, էկո քզիկ հըմալ կնիկ բերինք, օր էնի ջուր հ'ըլնա էնդոր ձեռք»։ Ինչ էրին, անկարելի էղավ։ Հ'ելավ առավ սադրազամ ու հ'ընկան ճամբախ։ Էկան ուր կնկա հոր քաղաք. հարցուց խոջա Ահմատի տունն ու գնաց մըսաֆըր էղավ։

Հըմկա մենք դառնանք Թագավորի հարսի վրեն։

Թագավորի հարսն է, օր հ'ընկավ սարեր, հ'ըռաստ էկավ հովվի մը։ Տվեց զուր խումաշ հալվըներ հովվին, առավ զհովվի հալվըներ, ինք հագավ։ Ուլ մը լե մորթեց, հանեց զփոր, քաշեց վըր գլխուն, էղավ քաջլուկ մը ու էկավ ուր հոր տուն, էղավ մշակ։ Հ'իրկուն մը խոջա Ահմատ, էն խոջեն, օր աղչկան դաս կիտեր, խոջա Ահմատի տղեն, խոջա Ահմատի հետ էկող մեկել մարդ, Թագավորի տղեն ու սադրազամ նստուկ են։ Թագավորի տղեն ասաց.—Խոջա, մըժուլի մը էրե, քիչ մը օր հ'ընցունք։

Խոջեն ասաց.— Ես չըմ գինա, թող սադրազամ էնե։

էն թալեց էնդոր վրեն, էն՝ էնդոր վրեն, ասին՝ թըղ քաջլուկն էնե, ծիծղանք։ Թագավորի տղեն, չմոռնամ ասել, օր դրո բան մը չբացեր է խոջա Ահմատին։

Քյաջլուկն ասաց.— Ես մըժուլի կէնիմ էն խավլով, օր դուռ փակիմ, բալնիկ առնիմ իմ մոտ, որն օր դուրս կուզե երթալ, թըղ հըմկա երթա, էնգան չըմ թողի մարդ դուրս հ'ելնի։

Հըմենք լե ըսին՝ թըղ էղնի, մարդ դուրս չէրթա։

Ասավ Քյաջլուկ.—Կեղնի ու չեղնի խոջա Ահմատ մը, մեկ տղե մը, մեկ աղջիկ մը, մեկ կնիկ ու մեկ հարս։

Խոջա Ահմատ շուտ մը դանկըճներ տընկեց ու ինքն ուրեն կասեր՝ կերևա էդի իմ հեքիաթն է։

— Խոջա Ահմատ հ'ելավ առավ զուր տղեն, կնիկն ու հարս, գնաց հաճութենի, աղջիկ մինակ թողեց տուն ու թանբիհ էրեց ուր տան խոջին, օր հ'ըմնօր հ իդա, աղջկան դաս իտա։ Աղջկա վրեն իշքե, հար ինք դառնա հ'իդա։ Էդ խոջա Ահմատի թաղի տղեկներուց մեկ ծուիր էր էդ աղջկա վրեն ու խոջին ասեր էր. «Խոջա, դու զէդ աղջիկ սազիս ընծիկ, ինչ ուզիս՝ կիտամ»։

Խոջեն ասաց.— Ես կելնիմ դուրս։

Քյաջալ ասաց.—Ես չա՞սի մարդ դուրս չպիտի հ'ելնի, էլ հ'որի՞ ընծիկ տվիք ասիլ, էլ չըմ ասի։

Թագավորի տղեն ասաց.— Դու զքու հեքիաթ ասե, մարդ հ'ոկցա դուրս չելնի։

Քյաջլուկ շողցավ.—Խոջեն է կասե՝ թըղ էղնի, իմ գլխուն ու աչքին։ Կիգա էդ աղջկան կասէ. «Աղջի լաո, քու հեր գնաց հաճութենի ու հ'անգըցավ։ Կարելի է մեռիր է, մանցի էնդին, էկո կարգիմ զքզիկ»։ Աղջիկ կասե. «Խոջա, դու տեսար, օր իմ հեր հաճութենի երթալու ատեն, վերև աստված, ներքև քզիկ թատլիմ էրեց գիս, կյոյեա դու մըր տան խոջեն իս էղի, իմ հոր տեղն իս, էդ ի՞նչ է, դու կասիս։ Թե օր հըմալ է, էլ իմ ջեմք չշենքիս»։ Տնեն կէնե դուրս։ Խոջեն կտեսնա օր ուր օտք կտրավ խոջա Ահմատի տնեն, կելնի գիր մը կգրե խոջա Ահմատին, թե. «Դու քանի օր գացիր իս, քու աղջիկ զքու տուն էրիր է բոզխանա, օրական հարիր հոգի կբերե, հարիր կտանե»։ Էդ թուղթ խոջա Ահմատի ձեռք օր կհասնի, կասե. «Քանի էն աղջիկ սաղ է, էլ էն տուն չպիտի մտնիմ»։ Կասե ուր տղին. «Գնա զքու քուր սպանե, ջապիկ թաթխե արնի մեջ, առ էկո ընծիկ, օր դառնամ երթամ իմ տուն»։

Խոջեն վիսա կասե՝ ես դուրս կելնիմ։ Ֆախաթ թագավորի տղեն չթողե, կասե՝ մեռնիս լե հ'ոդա կմնաս։

— Խոջա Ահմատի տղեն է, կիգա, էլ ձեռք չերթա զուր քուր մորթե, կտանե թողե սարու մը գլուխ։ Ուլ մը կառնե, մորթե, քուրոջ շապիկ կթաթխե ուլու արնի մեջ, կառնե կէրթա ուր հոր, թե՝ սպանեցի։ Հեր նոր կդառնա կիգա ուր տուն։ Աղջիկն է, անվերի սարու գլուխ զուր հալվըներ կիտա հովվի մը, կառնե հովվի հալվներ, ինք կհագնի ու կէրթա աղբրի մը վրա կնստի։ Թագավորի տղեն է, ուր աթբայով ավխուշի կելնի էն կողմեր։ Ուր ծառաներ կբերին ձիանք էդ աղբրի վրեն, օր ջուր խմցուն։ Ձիանք աղջկա շոխ ջրի մեջ կտեսնան, կփախնին կէրթան, ջուր չեն խմի։ Կէրթան թագավորի տղին կասեն, թե՝ ձիանք ջուր չխմին, ինչքան տարանք աղբրի վրեն, խրոտան, էկան կանան ուրանց տեղ։

Թագավորի տղեն ասեց. «Կա ու չկա իմ հեքիաթն է. էդա քյաջլուկ կամ իմ կնիկն է, կամ թե խապար մը ունի իմ կնկաց»։

— Թագավորի տղեն ինք կիգա ջրի վրեն, կիջքե օր շոխ մը կա ջրի մեջ, գլուխ կվերցու վի, կտեսնա օր հուրնի հրեղեն աղջիկ մը ծառու փրտոտ նստած. կվերցու տանե, կէնե ուրեն կնիկ։ Էդ աղջիկն է տասնուհինգ տարի թագավորի տղին կնգութեն կէնե, իրեք ճժու մեր կէղնի, հետ չխոսա։ Ինադ կէնե օր զինք սարու գլուխ բռնիր է, տարեր է, չհարցուցեր է՝ դու վի՞ր աղջիկն ես, հ՝օ՞րին ես էկի հ՝ոգի։ Օր մը դերվիշ մը կիգա կընցնի, թագավորի տղեն կասե. «Ես կնիկ մ՝եմ բերի, էղավ տասնուհինգ տարի իմ կարգվիլը, իմ հետ իսկի չխոսա, թուղթ մը էրե օր լեզուն բացվի»։ Դերվիշ կասե. «Քու կնիկ լալ չէ, ինադ է էրի քու հետ, չխոսա։ Խաշե իրեք հավկիթ ու ամեկ մեկ թավուր ռանկով մը ներկե, տուր քու ճժերու ձեռք. հանդե էնդոնք զիրար կծեծին, դու լե պատրվտի տեղ մը, երբ մեր ուրանց խոսաց, հ՝ելի բռնե»։

Թագավորի տղեն է, դերվիշի ասածի պես, կխաշե իրեք հավկիթ, մեկ կարմիր, մեկ կանաչ, մեկ դեղին, կիտա ճժերու ձեռք ու ինք կպատրվտի դռան հ՝էտև։ Ճժեր զիրար կծեծին հավկթի վրեն։ Էն կասե՝ զկարմիր կառնիմ, էն՝ զկանաչ։ Մեր ուրանց կիգա կասե. «Ձեր հոր խելք էդա է, ձըր ի՞նչ պիտի էղնի»։ Կելնի թագավորի տղեն զկնիկ կբռնե ու նոր կսկսեն իրարու հետ խոսալ։

Կընցնի ժում ու ժամանակ մը, թագավորի հարսն* է, կասե. «Ես կէրթամ իմ հոր տուն, ղիմ հեր ու մեր տեսնամ հ՝իգամ»։ Թագավորի տղեն կբերե դնե զկնիկ ու զուր իրեք տղեն, կելնին կիգան։ Կելնին կիգան իրեք ավուր խոնախ օր կիգան, սագրազամ աչք կթալե էդ կնիկ, կասե. «Դու իմ հետ պիտի իտաս առնես. թե օր չիտաս առնիս, հ՝էսօր զքու մեծ տղեն պիտի մորթիմ»։

---

* Բնագրում՝ տղեն (Ս. Կ.)

Ըստհաղ սադրազամ կասե՝ դուրս կելնիմ։ Քյաջալ կասե.—Ջասի, որն օր դուրս հ՝էլնի, ես զիմ հեքիաթ չըմ ասի։

Թագավորի տղեն կասե.—Խասավաթ մ՝էնի, մարդ հոկցա հոնա չէրթա, քանի օր դու զքու հեքիաթ չըխրլըսցուցիր իս։

Քյաջլու չանեն շողցեր էր, ասավ մեկ լե.—Թագավորի հարսն է կասե՝ ես հրմալ բան չըմ էնի, կուզես մորթե։ Էնօր զմեծ տղեն կմորթե։

Վիսա սադրազամ կասե.—Կելնիմ կէրթամ դուրս։ Մարդ անկաջ չէնե։

— Մեկել օր հ՝իրկուն էմլե սադրազամ կբռնե թագավորի հարսի յախեն, կասե. «Թե օր իմ հետ չիտաս առնիս, էսօր լե զքու միջնեկ տղեն կմորթիմ։ Թագավորի տղի կնիկ կասե «Մարդուս մեկ անգամ կասին, քզիկ անկաջ կա, ես ասի՝ էդ հրմալ բան չըմ էնի, կուզես նե՝ մորթե»։ Էն օր լե միջնեկ տղին կմորթե։ Լուսուն կելնին ընկնին ճամբախ։ Հ՝իրկուն օր խոնախ կհասնին, մեկ լե կբռնե թագավորի տղի կնկա փողպատ. «Թե էսօր լե իմ հետ չիտաս առնիս, էսօր լե զքու պզտի տղեն կմորթիմ»։ Կնիկ նորեն ձեռք չի տա սադրազամն, էն օր լե զպզտիկ տղեն կմորթե։ Մեկել օր հ՝իրկուն սադրազամ էմ լե կբռնե թագավորի հարսի յախեն։ Կասե. «Էսօր դոր քոմն է, եթե ձեռք չիտաս ընծիկ, զքըզիկ լե քու տղեկներու պես կմորթիմ»։ Թագավորի հարսն է, կտեսնա օր յախա չկրնա ուղատե սադրազամի ձեռքեն, կըսե. «Թող էղնի, մինակ թող զիս, էրթամ դուրս մը՝ ելնիմ ու գամ, ինչ կուզես նե՝ էրե»։ Սադրազամ չթողե, կասե՝ վախենամ փախնիս։ Կբերե հ՝էրկեն շըրիտ մը, մեկ ճոթ կկապե թագավորի հարսի օտք, մեկ լե կառնե ուր ձեռք ու կթողե։ Թագավորի հարսն է, հ՝եբ կհեռանա սադրազամի չադրից, ղչվան կկապե փըշբըլի մը ու կընկնա սարեր։ Կէրթա, ռաստ կիգա հովվի մը։ Կուտա զուր հալվըներ, կառնե զհովվի հալվըներ, կհագնի, ուլու մը փոր լե կմորթե, քաշե վրը գլխուն, կէղնի քյաջլուկ մը, կիգա ուր հոր դուռ, կէղնի մշակ։

Հուշիկ մը քաջլվենին կվերցու գլխի վրավեն, կասե՝ «Էդա էն աղջիկ, էդա էն խոջեն, էդա էն թագավորի տղեն ու էդա էն սադրազամ»։

Խոջա Ահմատ կփոշեմնի ուր կնկա սպանելու վըրեն.—Հե՜յ, վախ,— կասե,— ես ինչեր էրի, խոզի զիմ կնիկ չընք սպանի։

Էն մարդ օր էկած էր խոջա Ահմատի հետ, կասե.—Խոջա, դու խասավաթ մ՝ էնի, ես զքու կնիկ տարեր իմ, պահի. ես գինեի, օր ղու կփոշեմներ, կէրթամ հանեմ, բերիմ, թե օր խապուլ կէնիս,—ու կըսե,— անկաճ կէնիք բանըմ լէ ես կասիմ։ Խոջա, միտքդ կիգա՞, օր էկար ընծիկ տարիր քու հետ հաճութենի, չհարցուցիր, թե՝ դու ո՞րն իս, ո՞ր չիս, ես լե բան մը չասի։ Ես Լոռա-Համզա փեհլիվան իմ. աշխարհ իմ ձեռք ատատ ու մատաթ էր. օր մը հ՝էլած էի ավխուշի, էնդիեն տեսա ձիավոր

մը էկավ։ Ասի՝ էկավ իմ ավ։ Մեկ լե տեսնամ էկավ հասավ ընծիկ, գլըփ զարկեց իմ մեջք, վերուց թալեց ձիու խառբուզին, գլուխս կախվավ մեկ կողմ, քշեց հ՝ելավ սարու մը գլուխ, քոշկի մը առջև հ՝իջավ։ Մեկ լե տեսնամ ձիու թարկուց հ՝իջուց զուր խուրջին, օր լիքն էր էրկըթե սրքթեսներով. մեկ-մեկ հանեց զէդ սըքթեք, դրեց պատի վրեն ու ձեռքով զարկեց հնչի հ՝ելավ գլուխ ու ասաց ընծիկ. «Քանի մարդու կիգա, չըս վյախնի, հ՝եբ տեսար կնկա գլուխ է, օր կիգա, կհեծնես զիմ ձին ու կփախնիս, ետևդ լե չըս իշքի»։ Հ՝ելավ մտավ էդ սըքթեսներու վրայով ներս։ Մեկ լե իշքիմ՝ գլուխ մը՝ էկավ, վազի վրեն, պեխերկով ու մազ մուրկով մարդ էր. մեկ լե էկավ, էմ լե վազեցի՝ մարդ մեկ լե էկավ, վերջապես յոթն թմավ։ Մեկ լե տեսնամ հուրնի-հրեղեն աղջիկ մը, ուտիս չուտիս, հ՝երես իշքիս։ Զդուռ բացեց ու էկավ, ասաց. «Կտեսնաս զէդա յոթն գլուխ, իմ հողբոր ճժերն են. իմ հեր մեկուճար աղջիկ մ՝ ուներ, քանի օր պիտեր իմ հողբրրտոց ճժերուն կասեր՝ էկեք զիմ աղջիկ առեք. մեկ զինք հ՝առաջ չիտեր. էղավ օր հ՝ելավ տվեց ուրիշին։ Օր մը իմ էրիկ ավ ու խուջի էկած էր էդա դին, բռնեցին սպանին, ես լե էկա զիմ իրկա հայիֆ առա, էդա լե իմ իրկա գերեզմանն է։ Կբանաս զիմ իրկա դերեզման, զիս կսպանիս, կթալիս ուր կուզտ, կհեծնաս զիմ ձին ու կէրթաս։ Ասի ուրեն. «Իմ ձեռք չրռնեմ»։ Ասաց. «Քանի օր իմ գլխու գալած պատմի զքզիկ, թե օր դու չսպանիս զիս, ես կսպանիմ զքզիկ, սորա կդառնամ զիս կսպանեմ»։ Ջանդարտի էղա, զարկի սպանեցի, բացի զիրկա գերեզման, դրի կշտի հետ, նալաթ տվի տյունիի մալ ու թամալին, հեծա զիմ ձին ու քշեցի։ Էկա քզիկ հ՝ըռաստ, գացինք հաճուքենի, օղորդ է, օր կնկա մեջ աղեկ չկա, բըլե քրտու խոսք մանշուր է. «Նալաթ պե ժընան, նա համու համինան. հընըկ հընքընան»*։

Լոռա Համզա փեհլիվան նոր գնաց հանեց խոջա Ահմատի կնիկ, բերեց թասլիմ էրեց իրկան, աղջկա խոջենն ու սադրազամ ձիաներու պոչեր կապեցին, սպանին ու թագավորի տղեն առավ զուր կնիկ ու գնաց։ Էնոնկ հասան ուրանց մուրադին, դուք լէ հասնեկ ձըր մուրադին։

---

* Բուք կնկան, բայց ոչ թե բոլորին, ոմանց (Ս. Բ.)։